ԱՐԾՐՈՒՆ ԱՎԱԳՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր

ՀԱԿՈԲ ՄՆՁՈՒՐԻՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԱՂԵՏԸ

1915-ի եղեռնը կասեցրեց արեւմտահայության մշակութային ու ազգային վերելքը,, անճիտվեց ու դարագրվեց արեւմտահայ գրական սերուցքը, բայց եւ եղան հրաշքով փրկվածներ: Հակոբ Մնձուրին (բուն անունով՝ Հակոբ Տեմիրճյան) նրանցից մեկն էր: Ծնվելով ու ապրելով գավառում՝ նա ամենայն խորությամբ զգացել էր թուրքերի կողմից հայ բնակավայրերում իրականացվող ճնշումներն ու բռնությունները: Բորբոքված նշագեղձերը վիրահատելու նպատակով 1914 թվականին հայրենի գյուղում ուսուցիչ ու հողվոր աշխատող Մնձուրին մեկնում է Կոստանդնուպոլիս: «Չեմ կենար, անմիջապէս կը դառնամ»,- խոստացավ նա հարազատներին: Չվերադարձավ: Սկսվել էր պատերազմը: Մնձուրին չարժանացավ իր գյուղի, ողջ գավառի ու իր ընտանիքի (թուրքերը սպանել են նրա կնոջն ու չորս զավակներին) ողբերգական ճակատագրին, սակայն իր ողջ կյանքում հոգում կրեց այդ ցավը: Այսպես՝ պատահականորեն ազատվելով եղեռնի ճիրաններից՝ Հակոբ Մնձուրին իր ողջ կյանքում այլեւս դուրս չեկավ Պոլսից, եղավ հացագործ զինվոր, «ամէն կողմ վազող ծառայող մը», ապրելու համար խոտ ու հարդ վաճառեց, աշխատեց որպես հաշվակալ, իսկ իր կյանքի վերջին տասը տարիներին Պոլսի Ս. Հարություն փոքրիկ եկեղեցում մոմ էր վաճառում՝ օրվա հացը վաստակելու համար: Չարքաշ աշխատանքին զուգահեռ Մնձուրին չդադարեց ստեղծագործելուց: Գրում էր գիշերները, աշխատանքի գնալու ճանապարհին, ձեռքի ափի վրա, բանավոր՝ ինքն իր հետ զրույց անելու նման՝ հիշելով հարազատներին, համագյուղացիներին, «վերակենդանացնելով» իր երկիրը, հայրենի դաշտերն ու լեռները, անգամ ընտանի կենդանիներին: Նա տառացիորեն ապրում էր այդ աշխարհով, ոգեորվում ու ... «յորդում». «Իմ գիւուղիս արտերը, այգիները, գետափները միտքս որ իյնան, աչքիս բան չերեւար, կը խենթեցնեն զիս»:[1]

Իր ամբողջության մեջ այդ գրականությունը կյանքի գեղեցկության, արդարության, աշխատանքի ու արարման, հայ մարդու բարության, ազնվության ու նվիրման գաղափարներն է տարփողում, ու կարող է թվալ, թե դուրս է ժամանակի ու ազգային կյանքի հոգս ու ցավերից: Եվ իրոք, նրա պատկերած աշխարհում բացակայում են մեծ ու փոքր քաղաքականությունը, հասարակական տեղաշարժերը, ազգային գաղափարները, անգամ մշակութային ու հոգեոր կյանքը եւ դրանով իսկ նա «հեռու է մնալու» իր ապրած երկրի համար անընդունելի «մեղքերից»:

Իրականում, մնձուրիական ողջ գրականությունը թաթախված է հայ կյանքի ու մայրենի հողի կորստի ցավով, կարոտով, եղեռնի պատճառած մորմոքով: Այո՛, Մնձուրին ուղղակի ու բացահայտ չի պատկերում եղեռնը, բայց նրա գրականությունը գալիս է ասելու, որ թուրք մարդասպանների համար այդ մարդիկ մի մեծ «հանցանք» էին գործել. սիրում էին իրենց երկիրն ու աշխատանքը եւ ... հայ էին ծնվել:

---

1 «Մարմարա», 1959, 16-ը ապրիլի:

Մնձուրու ստեղծագործությունների թեմաների ընտրությունը արդյունք է ոչ միայն կապարված պատմական սպանդի, այլեւ քաղաքական այն ծանր պայմանների, որոնց մեջ ապրեց գրողն իր ողջ կյանքում: Պայմաններ, որոնք հետեւանք էին թուրքական մոլոխի հայակեր գործունեության ու բուն երկրում տիրող բռնակալական օրենքների, պայմաններ, որոնց վերեւում կանգնած էր եղեռնի ուրվականը:

Հակոբ Մնձուրու կյանքն ու գրականությունը առանձնահատուկ եղան: Նա ապրեց սփյուռքի այնպիսի դաժան մի գաղութում, ինչպիսին թուրքահայ գաղութն էր՝ մշտապես ենթակա արգելքների ու սահմանափակումների: Թեեւ նրա ստեղծագործություններն սկսել էին տպագրվել դեռեւս 1906 թվականից, երբ դեռ նրա 20-ը չէր լրացել, սակայն իր գործերի մեծագույն մասը նա ստեղծեց 1920-ականներից սկսած, իսկ հանրությանը ներկայացավ միայն 1958-ին, երբ Պոլսի Եսայան սանուց միության կողմից տպագրվեց նրա առաջին գիրքը («Կապոյտ լոյս»), ու ինքն արդեն 72 տարեկան էր (գիրքը 1938-ին մեկ անգամ արդեն տպագրվել էր, սակայն կորել էր տպարանից):

Մնձուրին այն եզրակացության էր հանգել, որ իր գրականության մեջ եղեռնի եւ նրա պատճառած ավերիչ վնասի ընբռնումը պետք է թողնել ընթերցողին՝ պատկերելով հետեւանքները (երկրի ու հողի դատարկում, մարդկային ազնիվ հատկանիշների խաթարում, հայրենի եզերքի կորուստ...):

Եւ իսկապես, Մնձուրու գործերում եղեռնը հանդես է գալիս յուրովի խորքային լռությամբ, որը կարելի է անվանել «լռության ճիչ»: Այն չի ցուցադրվում եւ կամ նկարագրվում: Այդ գրականությունը «խոհի ու խոկումի գրականություն» է, որում ամեն ինչ ասվում է փողատակում, եւ հեղինակային ասելիքը պետք է տեսնել բառերի սահմանից այն կողմ, «չասվածի» մեջ, ավելի ստույգ՝ ասվածի, բայց չգրվածի մեջ, այդ գրականության իմաստը պետք է տեսնել ոչ թե կարդացածի, այլ զգացածի մեջ:

«Մնձուրին մտածել տուող հեղինակ մըն է»,- գրել է Ռոպեր Հատտրեճյանը[2]: Եւ իրավ, ներքին հոգեկան վիշտն ու ընդվզումը, թախիծը, որ պարունակում է այդ գրականությունը, արդյունք են ոչ միայն եղեռնի ***ընթացքի***, այլեւ եղեռնի ***հետեւանքի***: Հետեւանք, որ պարունակում է մեծ ասելիք:

Մնձուրին իր մի քանի պատմվածքներում, իհարկե, բացահայտ կերպով է գրում մինչ «չնախատեսված դեպքերը» Թուրքիայում տիրող բռնապետական մթնոլորտի մասին: «Ոսկի տեղաց Էլպակյանի հարսանիքին» պատմվածքում, օրինակ, նա պատմում է, թե ինչպես ոչ մի մեղք չգործած Էլպակյանը թուրքական իշխանությունների կողմից մեղադրվում է որպես քաղաքական խմորումների մասնակից, բանտարկվում է ու այնտեղ էլ մահանում: Իսկ «Խաղցեք գառնուկներս, ուլիկներս, խաղցեք, մարդն ալ գնաց, տերտերն ալ գնաց, խաղցեք» պատմվածքում գրողը, օգտագործելով այլաբանական հնարանքներ ու բառեր («ապրիլ», «սեւ ամպեր», «մեռնել», «տասնհինգ» եւ այլն), գրում է, թե ինչպես ապրիլ ամսին, երբ «աղվոր օդ մը կար դուրսը», հանկարծ հայտնված ամպերը սեւացնում են երկինքը: Պատուհաս մրրիկը իր հետ ձյուն ու ավեր է բերում, մեռցնում շուրջբոլորը ամեն բան. «Մաման... ժայռին առջեւը երկու թեւերը ծալեր, մնացել էր: Մեռեր էր... Ուլերն ու գառներն ալ առջեւը

2 «Մարմարա», 1958, 1-ը մայիսի:

սառեր էին: ... Անոնք հող եղան: Ամեն ապրիլին՝ պահակ բամբուսիկ մը (ծաղկի տեսակ - Ա. Ա.), ավելի վերը, երեք գծի վրա, տասնըհինգ բամբուսիկներ կըբուսնին իրենց հողակույտերուն վրա: ***Հիմա մենք հոն չենք***. հիմա ալ բամբուսիկները նորեն կըբուսնի՞ն, արդյոք, կ՚ըսեք» (ընդգծումը – Ա.Ա.)[3]: Չենք կարող ասել՝ արդյոք հիմա՞ էլ այդ տեղերում բուսնում են «աշխարհիս վրա ամենաաղվորիկ այդ ծաղիկները», բայց մեր ականջին հնչում են Մնձուրու պատմվածքի թափանցիկ տողերը. «Խաղցեք ուլիկներս, գառնուկներս, խաղցեք, ալ զատթիյե չի գար, ձիավոր չի գար» [4]:

Կարդալով Մնձուրու գրականությունը, խորանալով նրա պատկերած աշխարհի մեջ՝ ակամա հարց ես տալիս ինքդ քեզ. իսկ ո՞ւր մնացին այդ մարդիկ, ի՞նչ եղան, ինչո՞ւ չկան նրանք: Բնականաբար ծնվում է մեղավորներին դատապարտելու խնդիրը՝ այն մարդկանց, որ պատճառ դարձան մի շեն աշխարհի կործանման:

Մնձուրու հարցադրումը՝ ինչո՞ւ, շատ տարողունակ է: Չէ՞ որ զոհ դարձած այդ մարդիկ կյանքում մի նպատակ ունեին ու լծված էին դրա իրագործմանը՝ շենացնել մայր հողն ու հայրենի տունը, խաղաղության մեջ շարունակել ազգի գոյատեւումը, աշխատել ու արարել: Աշխատանքն էր, որ պահում էր այդ նույն հողը, շենացնում ընտանիքը, շարունակում կյանքը, որը պիտի հանգեր աշխարհի հավասարակշռությանը:

Մնձուրին բազմաժանր հեղինակ չեղավ: Իհարկե, գրեց հեքիաթներ, օրագրություններ, վիպակ, թատերախաղ, ազգագրական նյութեր ու ժամանակագրություններ, սակայն նրա տարերքը պատմվածքն էր:Նրա պատմվածքների մի մասը այսօր էլ շարունակում է մնալ մամուլի էջերում, սակայն մի մեծագույն մասն ամփոփված է «Կապոյտ լոյս», «Արմտան», «Կռունկ, ուստի՞ կուգաս», «Տեղեր, ուր ես եղեր եմ» ժողովածուներում:

Մնձուրու պատմվածքներում, որոնց թիվը հասնում է շուրջ երեք հարյուրի, առկա են պարզ, հասարակ մարդկանց բազում կերպավորումներ: Նրա կերտած հերոսներն ունեն այն առանձնահատկությունը, որ այս կամ այն պատմվածքում ավարտական կերպարներ չեն դառնում, նրանք՝ քրիստոնեաբար ու ազնվորեն ապրող այդ մարդիկ, շարունակվում-ամբողջանում են պատմվածքից պատմվածք՝ ասես հուշելով, որ այդ մարդկանց ապրած ժամանակն ու կյանքը ընդհատելի չէ, եւ իրենց հիշատակի նման հար ապրելու եւ ապրեցնելու են մեզ: Մնձուրու գրականությունը վավերական պատմության արժեք ունի: «Ես վկա եմ»,- գրել է Մնձուրին: Բայց նա ***պատմություն չէ, որ ստեղծում էր***: Մնձուրին ***պատմությունն էր վավերացնում***: Նրա այդ վկայությունները՝ աշխարհագրական, ազգագրական, մարդաբանական, հաստատում են մի բան, որ եղել է մի շեն աշխարհ, ու այժմ չկա խաղաղասեր այն ժողովուրդը, որ կառուցել գիտեր ու սիրում էր իր մայր հողը, ինչպես իր զավակին:

Մնձուրու գրականության կենտրոնական դեմքը մարդն է՝ հայ մարդը՝ արեւմտահայ մարդը: Եւ պատահական չէ, որ իր «Ժամանակագրութիւն»-ներից մեկում նա գրել է. «Ես մարդը պատմեցի՝ գիւղացին»: Նրա հետ ու նրա շուրջ են կատարվում բոլոր իրադարձությունները: Այդուհանդերձ, այդ գրականության ***գլխավոր հերոսը հայրենիքն է, կարեւորագույն ասելիքը, հարցադրումն ու խնդիրների խնդիրը՝ նույն երկրի ու հողի կորուստը եւ այդ աշխարհը հայ մարդու հոգում անմար պահելու միտումը***:

3 **Հ. Մնձուրի**, Երկեր, Երեւան, 1968, էջ 417:
4 Անդ:

Կ. Պոլսի «Մարմարա» թերթում խոսելով իր գրականության մասին՝ թեեւ նա գրել է. «... ես իմ գիւղէս ու գիւղացիներէս իմ փիպարներս առնելով հայրենասիրական զգացական գրականութիւն մը ընելը երբեք դիպաւորութիւններուս մէջ չունեցայ»[5] , սակայն նույն թերթի մի այլ համարում ահա թե ինչ է զգուշացրել իր ընթերցողներին. «Իմ պարագաս բացառիկ է գրականութիւններու պատմութիւններուն մէջ: ***Ես կը պատմեմ տեղէ մը, ուր այլեւս չկան իմ անձերուս ու անոնց շարունակութիւնը***: ***Իմ պատմուածքներս միայն պատմուիւն չեն***: Իմ անձերուս եւ տեղերուն ազգագրութիւնն է, ***ազգային պատմութիւնն է... Անոնց պանթէոնն է...***» (ընդգծումները - Ա. Ա.)[6] :

Մնձուրին իր պատմվածքների մեծ մասում հալեցնում-պատմում է 1890-ից մինչեւ 1914 թվականը ընդգրկող պատմական Հայաստանի Արմտյաց գավառի կյանքը: «... իմ Արմտանն ու արմտանցիներս մեր տեղահանութենէն առաջուան Արմտանն ու արմտանցիներն են,- գրել է նա,- հիմա ապ Արմտանը չկայ: Տեղը, անունը կայ միայն: Հիմա հոն եղողները, եկուորները ուրկէ՞ են, ո՞վ են: Սուրբ Սարգիսը չկայ հարկաւ... Լուսաղբիւրը կը վազէ հարկաւ, Լուսաղբյիւրին ի՞նչ կըսեն: ... յիսուն տարի պիտի ըլլայ, եկող մը չեղաւ, որ ճիշդ տեղեկութիւն մը ունենայինք»[7]: Իսկ ճիշտ տեղեկությունն այն է, որ հիմա մոլեռանդներից ու ոճրագործներից բաղկացած մի խաժամուժ է ապրում «հոն»:

Մնձուրու կյանքը տարագիր մարդու տխուր ճակատագրի վառ օրինակ է՝ կին, զավակներ, տուն ու տեղ կորցրած, լքված ու մոռացված հայ մարդու ու մտավորականի մարմնացում: Թվում է, թե նման կորուստներից հետո գրողը իր անձնական ու ընտանեկան ողբերգության լռելյայն կրողը պիտի լիներ: Չէ՞ որ մի ամբողջ երկրից Մնձուրուն մնացել են միայն «ճմռթկուած թուղթեր», որոնց վրա պիտի ջանար կենդանացնել հայրենի կորուստներն ու գեղեցկությունները: Եւ իրոք, որքան էլ անձնական ու ազգային աղետից այսսահար, նա այնուամենայնիվ ապրում է ու գրում՝ դրանով իսկ դառնալով իր մերձավորների, համազյուղացիների ու ողջ ազգության նահատակության պատմության վավերագրողը, հայության գլխին իջած աղետի պատմագիրը՝ ասելով աշխարհին, որ թեեւ նրանք չկան ու եթե նրանց անհայտ շիրիմներն անգամ լռեն, բայց նահատակ դարձած այդ մարդիկ ու երկիրը իր գրականության ու վկայությունների շնորհիվ խոսելու են ամեն մի հայի հետ եւ հաշիվ են պահանջելու աշխարհից ու բռնությունները իրականացրած երկրից:

Մնձուրին մի ողջ երկիր էր իր մեջ ապրեցնում եւ փոխադարձաբար ինքն էր ապրում նրանով. «Ես կամ անոնց մեջ»,- գրել է նա, ու ինքն էլ «հարություն առել» նրանց մեջ: Նրա էության մեջ նույնքան խտացված է հայ խոնարհ ու շիտակ գյուղացու տիպարը: Նա իր կերտած հերոսների նման հայրենի անդաստաններում վար ու հունձք անող մշակն է՝ այս դեպքում գրական մշակը, բառ ու բանի մշակը, որ վերաճում է հայրենի աշխարհի մարդկանց ու նրանց երազած կյանքի «կապույտ լույսի» փառաբանողի: Նրա պատկերած աշխարհում իրար են ձուլված մարդն ու բնաշխարհը, եւ երկուսի ամբողջացումը, եւ միասնությունը ***Հայրենիք*** ասված գաղափարին են հանգեցվում, որը խորհել է տալիս մեզ վաղվա օրվա

5 «Մարմարա», 1963, 28-ը նոյեմբերի:
6 «Մարմարա», 1967, 25-ը ապրիլի:
7 «Մարմարա», 1963, 28-ը նոյեմբերի:

վերաբերյալ, լավատեսություն ներշնչում, երկրի նկատմամբ սեր արթնացնում, մեզ հողի զգացողություն տալիս:

Պատկերելով գավառում ապրած իր օրերն ու յուրայինների կյանքը՝ գրողն ստեղծում է արեւմտահայ մարդու իդեալական տիպարը, որի մեջ թեեւ քիչ չէ «կյանքի տռամը», սակայն ավելի գերակշիռ են այդ նույն կյանքի գեղեցկությունները: Այդ մարդիկ աշխատանքը վերածել էին տոնախմբության, հանդեսի, հաճույքի, որի մասին Մնձուրին նկարչի ներշնչանքով է գրում. «Բովանդակ դաշտին եզերքը ցրված էին այր ու կին հնձվորներու բազմութիւններ, որոնք կը հնձէին անդադար: Ամեն ճամբաներուն նոյնպես որայաբարձ ջորիներու, էշերու շարաններ կըհայտնվեին: Անոնք կուգային, կըհասնեին, կըմիանային իմինիս, երկայն-երկայն քարավան մը կըկազմվեր, ու որան կրող տղոց մեծ խումբով, կենդանիներուն պարանոցներեն կախ զանգակներուն բազմաձայն հնչյուններով ու երգերով, մենք հաղթականորեն կիջնայինք գյուղ, կալերը»[8]: Հիմա էլ, ինչպես վկայում է գրողն իր այդ պատմվածքում, հաճախ «...կընկարվին իմ աչքերուս առջեւ անցած օրերու այդ տեսարանները»: Եւ, իրոք, այդ պատկերները նկարվել են ու ոգեւորել գրողին անգամ խոր ծերության օրերին, նրան մղել ստեղծագործական երկունքի: Մասունք առ մասունք «հավաքած» այդ աշխարհի մասին գրողը իրավացի է գրել. «... ես իմ երեկս, իմ անձերս, ***իմ երկիրս խոսեցուցի***»[9] (ընդգծումը - Ա. Ա.):

Իր մարդասիրական պատգամներով, ըստ էության, մնձուրիական գրականությունը մեծարենցյան մարդասիրության ու գյուղերգության շարունակությունն էր, նրա նման լույսի ձգտող, ամեն մարդկայինի ու գեղեցիկի որոնող, միայն թե բանաստեղծական արձակով շարադրված, որին հեղինակը խառնում է ոչ միայն զգացումային երանգներ, այլեւ խոսքի հումորային դրսեւորումներ, որոնք ընթերցողի մեջ ջերմության մթնոլորտ են ստեղծում, ծնում հարազատ լիցքեր առ ոչ միայն կորսված երկիրը, այլեւ արդեն վաղուց նահատակ դարձած մարդիկ՝ դրանով իսկ դառնալով այդ հող ու ջրի մի մասնիկը:

Մնձուրին խոստովանել է, որ այն, ինչ ինքը գրել է, չէր կարող չգրել. «Կը գրեմ, որովհետեւ... կուգան»: Նա գտնում էր, որ մեր «երէկին» ու մեր «այսօրին» մասին ինքը պարտավոր է գրել եւ որ «գրողին կենալը բնաւ չգար»[10]: Այո՛, «Համարյա թե երեկ տեսածի պես» նրա համար մեռած չէին այդ մարդիկ ու երկիրը: Նրանք Մնձուրու համար հուշ չէին, այլ ամենօրյա այցելու, որ իր հետ զրույցի էին բռնվում ու ... իր հետ դաշտ ելնում՝ վարելու եւ ցանելու, այգիները մշակելու, անասուններին խնամելու, սիրելու մարդկանց, հողը, աշխարհը: «Կարդացուիմ, չկարդացուիմ, ինչպէս թռչունը բարձրացած իր ճիւղէն կ'երգէ, ինչպէս ծառը իր բերքը կուտայ..., ես ալ կը շարունակեմ իմ աշխատանքս: Ես կը հաւատամ, թէ առաւելապէս գիւղը, գիւղին մարդիկ պատմելով, մեր գրականութեան, ինչպէս մեր մշակոյթին հաշւոյն աւելի լաւ բան մը չէի կրնար տալ...»,- գրել է նա[11]:

Իր պատմվածքներում հայրենիի կենդանության շունչը Մնձուրին պահպանում է նաեւ տեղանունների հիշատակումներով, տեղավայրերի մանրակրկիտ նկարագրություններով՝

---

8 Հ. Մնձուրի, Երկեր, էջ 88-89:

9 «Կռունկ, ուստի՞ կուգաս», Ստամբուլ, 1974, էջ 227:

10 «Մարմարա», 1967, 21-ը հուլիսի:

11 «Մարմարա», 1963, 28-ը նոյեմբերի:

նպատակ ունենալով շեշտել, որ այդ վայրերը հայկական, հայաբնակ ու հայաշեն են եղել:

Մնձուրու պատկերած աշխարհը բնության աղետով ծովի կամ սառույցների տակ անցած անիրական Ատլանտիդա չէր եւ ոչ էլ Վեզուվի հրաբխի տակ մնացած շեն ու բնակավայր: Թուրքը ջարդարար ու թալանչի թուրքն էր, որ անցել էր այդ աշխարհի վրայով ու ջարդել ծեր, կին ու մանուկ՝ ուրանալով, որ եղել է աշխատասեր մի ժողովուրդ, որի հետքը չկա այսօր: Մնձուրին հենց այդ անանց հետքի մասին է, որ պատմում է եւ հայրենի հողի կենդանի կանչը լսելի դարձնում իր պատմվածքներով: Այդ կանչը, շնորհիվ գրողի պատմելու ու վկայաբանելու գեղարվեստական յուրահատկությունների՝ շարադրանքի պարզություն, «խոսելու պես» գրելու ունակություն, գրելու ճիգի բացակայություն, ներկայացվող դեպքերին մասնակից լինելու պատրանքի ստեղծում եւ այլն, իր արձագանքն է գտնում ընթերցողի հոգում, ամեն անգամ հիշեցնում Մեծ Բացական եւ, Շահան Շահնուրի խոսքով ասած, ասել տալիս ամեն մի հայի «Սիրտս խոսեցավ»: Չէ՞ որ այնտեղ արոտների շշունջ կա, հայրենի հողերի բույր, լեռների լույս ու մարած օջախների ծուխ:

Իր դատարկումից հետո այդ եզերքն ունեցավ իր երբեմնի գեղեցկությունների ու կյանքի թրթռացումների հավերժացնողը. հոգ չէ, որ ինքը՝ հեղինակը, եւս իր երկրի նման դառնալու էր հուշ ու հիշատակ, դառնալու էր անցյալ, բայց եւ պատմական հայրենիքի նկատմամբ տածած սիրո եւ այդ սերն իր գրականության միջոցով մեզ փոխանցելու շնորհիվ երկուսն էլ զարմանալիորեն դառնալու էին հավերժական ներկա, ասես կան ու իրականում ապրում են, քո կողքին են ու քո մեջ: Մնձուրին գրում էր գյուղի մասին, բայց նա գյուղագիր չէր: Նա, ըստ էության, եթե կարելի է այդպես ասել, ***երկրագիր*** էր՝ իր հարազատ ու կորսված Արեւմտահայաստան երկրի տարեգիրը: Մնձուրու գրականությունը «մենք մեզ տուող գրականութիւն» է, ասել է թե՝ մեզ՝ մեզ վերադարձնող, մեզ՝ մեզ ճանաչելի դարձնող, որը շարունակությունը եղավ դեռեւս Կ. Պոլսի «Մասիսի» մեջ տպված Արտաշես Հարությունյանի «Վաղուան գրականութիւն» հոդված-մանիֆեստի հնչեցրած առաջադրույթների, որ հանգում էր հայ մարդու եւ հայ հողի միասնության գաղափարին:

Նրա գրականության դերը կրկնակի է կարեւորվում այն առումով, որ այն ստեղծվում էր հենց եղեռնը կատարած երկրի մեջ եւ իր սուր ծայրով ուղղված էր մեղավորների դեմ: Որքան էլ տարված անցյալով՝ Մնձուրու սիրտը մորմոքվում էր նաեւ հետեղեռնյան աշխարհի իրօրյա տխուր կացությունից, հեռու հեռվում անտեր ու անմշակ մնացած հայրենի դաշտ ու այգիների վիճակից: Ջարդարարների հոռի բարքերն ու բնածին ծուլությունը ամայացրել էին հող ու հովիտ: Մայր հողը օտարի ձեռքերում փոշիանում էր այնպես, ինչպես գրողի հոգին էր կարոտից մոխրանում: Գրողը անտարբեր չէր նաեւ իր «շուրջը եղածներուն» նկատմամբ: Նա տեսնում էր մարդու մի ուրիշ տեսակ, որ շարունակում էր հակված մնալ դեպի ավերածությունն ու բռնությունը: Թուրքը մնում էր նույն թուրքը:

Ավելի լայն առումով՝ Մնձուրու գրականության ասելիքներից մեկն էլ այն է, որ աշխարհն է, որ պիտի փոխվեր ու փոխեր մարդուն, զսպեր մարդ արարածի մեջ ապրող գազանին ու վերականգներ նրա այն տեսակին, որի մասին այնքան սրտաբխորեն գրում էր իր ստեղծագործություններում:

Ասվածից չպիտի եզրակացնել, թե Մնձուրու պատկերած գյուղաշխարհը կատարյալ էր: Այնտեղ եւս առկա էին քենն ու նախանձը, անարդարությունը, մանավանդ թշվառութ-

յունն ու հեպամնացությունը: Բայց դրանք այդ կյանքի հեփնամասում էին, էական չէին ու չէին պայմանավորում կյանքի բովանդակությունը: Զարմանալի չթվա, նման մարդկանց նկափմամբ եւս գրողը պահպանում է յուրափեսակ համակրանքի զգացում, եւ պափճառն այն է, որ նրանք եւս զոհեր ու նախափակներն էին նույն եղեռնի: Գրողի համար կարեւորն այն է, որ իր համաերկրացիները լցված էին անհուն բարությամբ, ազնվությամբ ու հափկապես խաղաղասիրությամբ, որն իր արփահայփությունն էր գփնում երբեք ուրիշինը չհափշփակելու դարավոր ավանդույթներով (զավթելու անասնական բնազդը չէ՞ր նաեւ, որ թուրքին մղեց հայությանը կոփորելու):

Հակոբ Մնձուրին ջարդ ու աքսոր ապրած մեր ժողովրդի արեւմփահայ հափվածի ՝ շառավիղը եղավ, փառապանքների ու կորուսփների միջով անցած հայ մարդու փիպար, որ իր կյանքով ու գործով հասփափեց իր ժողովրդի հարափեւելու անհողդողդ կամքը: Նրա գրականությունը լի է մեծ հավափով դեպի մարդը: Իր լավագույն՝ «Սուրբ Գեւորգ», պափմվածքի հերոսի՝ Շիրինի փայփայած սպասումով էլ նրա գրականությունը՝ որպես խոսփացված մոմ, վառվում է՝ աշխարհը մի փոքր ավելի բարի ու արդար դարձնելու համար:

Մնձուրու գրականությունը այսօր էլ ազգապահպան դեր ունի: Մի կողմից՝ այն մոռացությունից փրկում է ազգային բարք ու վարքի բազում սովորույթներ, մյուս կողմից՝ փոխանցելի դարձնում մեր ազգային նկարագիրը պայմանավորող այնպիսի սրբություններ, ինչպիսիք են մայր հողը, հայրենիքը, աշխափանքը, ընփանիքը:

Հակոբ Մնձուրին լավ էր գիփակցում իր կափարած գործի կարեւորությունը եւ իրավունք ուներ գրելու. «Մեր մշակոյթին, պափմութեան, մեր գրականութեան հաշւոյն իմ փըլածս աւելի թանկագին է»[12]:

12 «Մարմարա», 1967, 26-ը հոկփեմբերի: